

## Մարզպետն այցելեց Ապարանի եւ Արագածի տարածաշրջաններ 07.03.2012

Մարտի 6-ին մարզպետ Սարգիս Սահակյանը այցելեց Ապարանի եւ Արագածի տարածաշրջաններ: Նա հանդիպեց համայնապետերի եւ տեղի բնակիչների հետ, որի ընթացքում քննարկվեցին նրանց հուզող մի շարք խնդիրներ:

Մարզպետը պարզաբանումներ տվեց բարձրացված հարցերին, միաժամանակ ներկայացրեց երկրի ղեկավարության կողմից իրականացվող մի շարք ծրագրերի մասին: Բնակիչներին մասնավորապես հետաքրքրեցին մատչելի պայմաններով ազոտական պարարտանյութի, դիզելային վառելիքի հատկացման, ինչպես նաեւ հողի հարկի եւ գույքահարկի նախկին պարտքերի զրոյացմանն ուղղված ծրագրերը:

Ապարան քաղաքում բարձրացվեց մի քանի բազմաբնակարան շենքերի գազի մատակարարման հետ կապված հարցը: Խնդիրը քննարկվեց Հայրուսագազարդի Արագածոտնի մարզային վարչության ղեկավարության հետ եւ դրա լուծման համար ձեռք բերվեց համապատասխան պայմանավորվածություն: